

կողմից—որ արդէն ունի չորս զաւակներ. այսինքն թէ նա գոնէ մի խարուած աղջիկ—մայր էլ չէ, որ իր յանցանքը ծածկելու անողոք հարկում գտնուէր... այլ «մայր»:

Սուրէն

Մ. Տէր-Դամիկէւսն. «Թուղթա-Լաւածի զոհը» պատկեր. 1904. Բազու գին. 3 կողէկ.

Յայտնի է, թէ ինչպէս երեխաները՝ տղէտ ծնողների շնորհիւ, սնուտիապաշտութիւնների աղղեցութեան տակ մեծանալով, յետոյ անկարող են լինում թօթափել իրանց անիմաստու ծիծաղելի վախերը: Այսպէս օրինակ, մարդիկ, որ կարող են աներկիւղ գազանների դէմ գնաւ, երկիւղ են կրում մկնից, գորտից ևայցն: Կամ ուրիշներ, որ ցերեկով ամեն վտանգ արհամարհում են, մութն ընկնելու պէս վախենում են քաջքերից, դմբրից և զանազան ոգիներից: Այդ անիմաստ վախի արմատը պէտք է փնդուել երեխայութեան հասակում տրուած յոռի կըրթութեան մէջ:

Վերոյիշեալ պատկերը՝ ահա այդ ծնողական սխալ դաստիարակութեան դէմ կորեկու նպատակ ունի: Պատկերի միակ արժանիքը դրանումն է,

Սուրէն

Արման Սիլվեստր եւ Մարտի Պետջո. «Յանցաւոր մօր խոստվանուքիւնը». «Ընկերակից» Թարգմ. ? Թիֆլիս, 1905, գինն է 5 կոպ..

Մենք անկարող ենք ըմբռնելու, թէ ի՞նչ մտքով են դեկավարուել վերոյիշեալ ֆրանսիացի երկու հեղինակների այս բոլորովին աննշան էջերը ներկայացնելով հայ ընթերցողներին: Նիւթի ոչ ընտրութիւնն է յաջող և ոչ թարգմանութիւնը: Թարգմանութիւնը առ հասարակ անգրագէտ է: Մի օրինակ. «Ճեսէք, չհակառակէք նրան, և, երբ նա երբ և իցէ կը տրտմեցնի ձեզ իւր կամսաիրութիւնով, որը այն անօպասելի անկարգութիւններից մէկն է, որոնք ինձ և ամենին էլ, որոնք նրան շատ մօտ են եղել, լաւ ծանօթ է և այդ ժամանակ նրան չը հայ-հոյէք, իսկ աւելի լաւ է պինդ գրկէք,—կարծում եմ, որ այդ նըրան հանգստացնելու միակ միջոցն է:»

Իսկ, ի լրումն ամենայնի, սրբագրութիւնը կատարուած է չափազանց անինսամ:

Սուրէն